«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա *Տարրական դասարանի 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձեվավորման գործում*

ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Նարինե Սարգսյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Սիամանթոյի անվան հ.162 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……..……..3

ԳԼՈՒԽ Ի. ԴԱՍԱԳՐՔԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ…….…….5

ԳԼՈՒԽ II. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……...9

Գլուխ 3 Հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծություն……...……13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……..…….……20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ …….…….…… 21

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ…….……..22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և մշակութային փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունենում հասարակության, նրանում ընդունված սոցիալական նորմերի և արժեքների փոփոխման վրա: Այս առումով լինելով, երեխայի կրթության և դաստիարակության առաջնային սոցիալական ինստիտուտներից մեկը՝ դպրոցն իր վրա է վերցնում երեխայի արժեհամակարգի ձևավորման դժվարին պարտականությունը՝ դաստիարակելով երեխային որպես տվյալ հասարակության մեջ ընդունված նորմերի և արժեքների կրող, հայրենասեր մարդ և քաղաքացի: Այս գործում հատկապես բեկումնային է կրտսեր դպրոցական տարիքը, քանի որ արժեքների հիմնական մասը ձևավորվում է հենց այս տարիքում և դրանք են հիմք հանդիսանում երեխայի՝ արդեն գիտակցված արժեհամակրգի ձևավորման և կայունացման համար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել տարրական դպրոցի 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել դասագրքաստեղծ իրավական դաշտը,
2. Ներկայացնել դասագրքերի ստեղծման առանձնահատկություններն ու ընդհանուր նկարագիրը,
3. Ներկայացնել արժեքային համակարգի բնութագիրը կրտսեր դպրոցական տարիքում,
4. Վերլուծել դասագրքերի նյութերի դերը արժեքների ձևավորման գործում,
5. Վերլուծել հետազոտական աշխատանքի շրջանակում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները:

Հետազոտության նորույթը հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գիտատեսական գրականության համապարփակ ուսումնասիրությունն ու վերլուծությունն է և մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների վերլուծությունից ստացված արդյունքները:

Ուսումնասիրության օբյեկտը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործընթացն է:

Ուսումնասիրության առարկան է տարրական դպրոցի 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում:

Աշխատանքի տեսական նշանակությունը: Մեր աշխատանքը գրելիս ուսումնասիրել

ենք մի շարք օրենքներ, կանոնակարգեր և մասնագիտական գրականություն, որոնց հիման վրա կատարվել են վերլուծություններ: Այդ վերլուծություններն օգնել են ավելի հանգամանորեն ներկայացնել տարրական դպրոցի 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Աշխատանքում ներառված նյութը կարող է օգտակար լինել այս հիմնախնդիրն ուսումնասիրող հետազոտողների համար, ինչպես նաև օգտագործվել ավարտական աշխատանքներ, կուրսայիններ, ռեֆերատներ գրելու համար:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԴԱՍԱԳՐՔԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հնուց ի վեր «Դպրոց» սոցիալական ինստիտուտը մշտապես եղել է հայ ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման ամրոցն ու առաջընթացի գրավականը:

Ներկայիս կրթության համակարգը հիմնվել է 1918-1920 թվականներին՝ Հայաստանի առաջին հանրապետության կարճատև գոյության ընթացքում և զարգացել խորհրդային իշխանության տարիներին (1920-1990թթ.): 1991 թվականից Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը՝ լինելով խորհրդային կրթական համակարգի ժառանգորդը, թևակոխեց դժվարին անցումային փոփոխությունների փուլ: *Դասագիրքը* ուսումնական առարկայի դասավանդման համար ստեղծված ուսումնական ձեռնարկ է, որի ստեղծման գործընթացը տեղի է ունենում հանրակրթության ուսումնական չափորոշիչներին համապատասխան:

Հանրակրթական առարկաների դասագրքերի հրատարակման և բաշխման գործընթացը

Տարրական դասարանների դասագրքերը հաստատությանը հանձնելուց հետո, օգտագործվում են առնվազն երեք տարի՝ բացառությամբ օտար լեզուների և երաժշտության դասագրքերի: Մյուս դասարանների դասագրքերը, ինչպես նաև տարրական դասարանների օտար լեզուների և երաժշտության դասագրքերը հաստատությանը հանձնելուց հետո օգտագործվում են առնվազն չորս տարի: Առանձին դասագրքերի օգտագործման ժամկետը կարող է երկարացվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից:

1996 թվականի հոկտեմբերի 11-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի թիվ 298-Մ հրամանով ՀՀ-ում հիմնադրվել է Կրթական ծրագրերի կենտրոնը՝ ԾԻԳ-/Ծրագրերի իրականացման գրասենյակ/: Այս ընթացքում ԾԻԳ-ն իրականացրել է երեք վարկային ծրագիր: Դրանցից առաջինը <<Կրթության ֆինանսավորման և կառավարման բարեփոխումների ծրագիր>>-ն է, որն իրականացվել է 1998-2002 թթ. ժամանակահատվածում:

Դասագրքաստեղծման գործընթացը բարդ և կարևոր գործընթաց է, որն իրականացվում է մրցույթի միջոցով: ՀՀ Կառավարությունը՝ ի դեմս ԿԳՄՍ նախարարության, հայտարարում է մրցույթ, որին կարող են մասնակցել միայն հրատարակչությունները, այն փուլային է, որը ներառում է *դասագրքերի մշակման, փորձաքննության, երաշխավորման և հրատարակման փուլերը:*

Դասագրքերի մշակման փուլ

Այս փուլում, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հայտարարում է մրցույթ, որին մասնակցում են հրատարակչությունները: Սա բաղկացած է երկու ենթափուլից, որոնց ժամանակ հրատարակչությունները պետք է ներկայացնեն նախ ինքնավերլուծության փաթեթ, որը տվյալ հրատարակչության ինքնագործունեության անձնագիրն է, այսինքն, այն տեղեկություն է պարունակում այն մասին, թե տվյալ հրատարակչությունը ինչպիսի կադրային կազմ ունի, քանի հոգուց է բաղկացած, ինչ գործունեության փորձ ունի՝ հատկապես՝ գրքաստեղծման առումով:

Այն հրատարակչությունները, որոնց հետ կնքվել են պայմանագրեր, **երկրորդ՝ բովանդակային ենթափուլում** պետք է ներկայացնեն՝

- ✓ Պարզ շարադրանքով գրքի 60%-ի բովանդակությունը:
- ✓ Գրքի շապիկը ամբողջ, վերջնական տեսքով, իր վերջնական ձևավորմամբ, գունավորմամբ, շապիկի հաստությունը, մեծությունը, ստվարաթղթի որակը:
- ✓ Պահանջվում է նաև ներկայացնել այդ գրքի ցանկացած մեկ դասը իր վերջնական, ամբողջ տեսքով, իր տառաչափով, բառերի միջև միջակայքով (ինտերվալ), տողերի միջև միջակայքով, գունավորումը, տվյալ դասի վերաբերյալ վարժությունները, դիդակտիկ նյութը:

Դասագրքի էջերը չպետք է գերազանցեն՝

- 176 էջը (11 մամուլ)՝ տարրական (1-4-րդ) և միջին (5-9-րդ) դասարաններում,
- 192 էջը (12 մամուլ)՝ ավագ (10-12-րդ) դասարաններում[1]:

- ❖ Դասագիրքը և ուսումնաօժանդակ գրականությունը կարող են լինել թղթային, էլեկտրոնային կամ հիբրիդ (համակցված):
- ❖ «Թղթային, էլեկտրոնային և հիբրիդ դասագրքերի, դասագրքի մեթոդական ուղեցույցների և ուսումնաօժանդակ նյութերի օգտագործման (ներառյալ՝ հոնորարների վճարման) հետ կապված, մտավոր սեփականությանը վերաբերող բոլոր իրավահարաբերությունները կարգավորվում են դրամաշնորհի հրավերի պայմաններով և կողմերի միջև կնքվող պայմանագրով:
- ❖ Հիբրիդ դասագիրքը և ուսումնաօժանդակ գրականությունը նույն թղթային դասագիրքն ու ուսումնաօժանդակ գրականությունն են, որոնց մեջ ներառված են ավելացված իրականության տարրեր, որոնք հնարավորություն են տալիս բջջային համապատասխան հավելվածի միջոցով տվյալ թեմայի վերաբերյալ տեսաձայնային հավելյալ նյութեր ներառելու:

1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձեվավորման կարգը սահմանելու մասին, Երևան, 09.06.2022թ.

- Էլեկտրոնային դասագիրքը և ուսումնաօժանդակ գրականությունը ժամանակակից ուսուցման միջոց են, ծրագրային ապահովման հատուկ գործիք, որտեղ համակարգված ներկայացվում են նյութեր՝ գիտելիքների որոշակի բնագավառում գիտության և տեխնիկայի ժամանակակից ձեռքբերումներին համապատասխան:
- Դասագրքերի, այդ թվում՝ էլեկտրոնային և հիբրիդ դասագրքերի օգտագործման նվազագույն ժամկետը (տվյալ առարկայի չափորոշչի և ծրագրի պահանջների անփոփոխ մնալու դեպքում)՝ տարրական, միջին և ավագ դասարաններում 3-ից մինչև 7 տարի է՝ կախված տվյալ առարկայի շաբաթական դասաժամերի քանակից:
- Դասագրքերի օգտագործման ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով:
- Միջնակարգ կրթության 2-րդ և 3-րդ աստիճանների թղթային և էլեկտրոնային դասագրքերի վերահրատարակման համար օգտագործվում են սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) կողմից դասագրքերի օգտագործման համար ներդրված գումարները (բացառությամբ բրայլյան դասագրքերի և ազգային փոքրամասնությունների լեզուներով դասագրքերի, որոնց ստեղծումը, հրատարակումը և վերահրատարակումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին):
- ***Փորձաքննության և երաշխավորման փուլ***

Համաշխարհային բանկը փորձագիտական խմբին է տրամադրում իր կողմից կազմված գնահատման չափանիշների ցանկ, որով 10 բալանոց սանդղակով մասնագիտական խումբը պետք է գնահատի մրցույթի մասնակից դասագրքերը, հետևյալ տոկոսային հարաբերակցությամբ.

- 50% – բովանդակություն,
- 25% – դիզայն,
- 25% – գին:

Ստացված արդյունքները միջինացնելով ընտրվում է առավել համապատասխան դասագիրքը, որը երաշխավորվում է տպագրության:

Մեր կարծիքով, այս կետում կարելի էր կատարել որոշակի փոփոխություններ, քանի որ դասագրքերի ստեղծման գործընթացն այնքան կարևոր և պատասխանատու ընթացք է, որ ֆինանսական ցանկացած ասպետկտները պետք էր հանել նման գործընթացից: Ամեն դեպքում առաջնային պետք է լիներ միայն դասագրքերի

բովանդակությունը և ոչ թե ֆինանսական տեսանկյունից ավելի մատչելի տարբերակի ընտրությունը:

Հրատարակման փուլ

Երաշխավորման փուլն անցնելուց հետո հրատարակչությունը կրկին պայմանագիր է կնքում դասագրքի հեղինակի կամ հեղինակների հետ՝ դասագրքի մնացած աշխատանքի 40%-ը կատարելու համար:

Մինչև օգոստոսի 10-ը սահմանված ժամկետում հրատարակչությունները պետք է ավարտեին հրատարակման գործընթացը և օգոստոսի 10-ին դասագրքերը լինեին դպրոցներում:

Դասագրքերի վերահրատարակումից առաջ ուսուցիչների, աշակերտների, ծնողների շրջանում անցկացվում են հարցումներ՝ տվյալ դասագրքի վերաբերյալ հետևյալ ասպեկտներով.

- Արդյո՞ք տվյալ դասագիրքը պատշաճ կերպով է ծառայում նպատակներին,
- արդյո՞ք դասագրքերի որակից և բովանդակությունից գոհ են.
    - աշակերտները,
    - ուսուցիչները,
    - ծնողները:

Եթե 70% և ավելին դրական են արձագանքում տվյալ դասագրքի վերաբերյալ, ապա ԿԳՄՍ նախարարությունը կրկին պայմանագիր է կնքում տվյալ հրատարակչության հետ, և առանց որևէ մրցույթ հայտարարելու՝ փոքր-ինչ փոփոխությունների ենթարկելով՝ դասագիրքը վերահրատարակում է: Արդեն այս ժամանակ ֆինանսավորումը կատարվում է պետական կամ մասնավոր խողովակներով: Եվ հակառակը, եթե դասագրքի նկատմամբ բողոքներ, դժգոհություններ կան, ապա կրկին մրցույթ է հայտարարվում:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր դասագիրք ֆիզիկական մաշվածություն ունի, ԿԳՄՍ նախարարությունը պահեստավորում է մոտ 5000 դասագրքեր: Եթե որևէ մի դպրոցում, օրինակ, 10 գիրք է կորել կամ շատ վատ վիճակում է գտնվում, ապա դպրոցը դիմում է կրթության և գիտության նախարարություն, և վեջինս պահուստից տրամադրում է 10 գիրք:

Այսպիսով, առաջին վարկակին ծրագրի շրջանակներում 1998-2001թ. հրատարակվեցին

- 101 անուն դասագիրք,
- 60 մեթոդական ձեռնարկ:

ԳԼՈՒԽ 2. ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր օրերում տեղի ունեցող ժողովրդավարական, հասարակա–քաղաքական, մշակութային, տնտեսական մի շարք իրադարձություններով պայմանավորված փոխվում են հասարակության զարգացման հիմքում ընկած կարևոր համակարգեր և ոլորտներ:

Արժեքը արտահայտում է ինչ–որ բանի կարևորությունը, օգուտ, նշանակալի իր կամ երևույթ լինելը: Արտաքնապես արժեքը առարկայի կամ երևույթի առանձնահատկությունն է, սակայն նրա նշանակությունն ու օգտակարությունը սահմանված չէ բնության կողմից:

Արժեհամակարգը կողմնորոշիչ դեր ունի մարդու առարկայական և սոցիալական իրականության մեջ, որը նրա պրակտիկ վերաբերմունքն է շրջապատող առարկաների ու երևույթների հանդեպ[2]:

Կախված տարիքային առանձնահատկություններից և կենսակերպի պայմաններից մարդու արժեհամակարգը կարող է տարբեր լինել, սակայն կան արժեքեր, որոնք բացարձակ և միանշանակ են բոլորի համար:

Ընդունված է տարբերակել արժեքների երկու խոշոր խումբ՝

- Ազգային արժեքներ
- Համամարդկային արժեքներ:

Ազգային արժեքները տվյալ ժողովրդի համար արժեք հանդիսացող իրերն ու երույթներն են: Կոնկրետ ազգի համար արժեք կարող է հանդիսանալ լեզուն, մշակույթը, էթնիկական որոշակի առանձնահատկություններ, պատմամշակութային արժեքա հանդիսացող կոթողներ:

Համամարդկային արժեքներն առավել ընդհանրական առումով ընդգրկում են այն ամենը, ինչը կարևոր է մարդու համար՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից և կրոնից:

Համամարդկային արժեքների շարքում կարելի է դասել ազնվությունը, սերը, գեղեցկությունը, հավատը, այն ամենն ինչը կարևոր է մարդկային դիմագիծը պահպանելու համար:

2 https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%AA%D5%A5%D6%84

Կրտսեր դպրոցական տարիքն առանձնանում է արժեքների ընկալման և ձևավորման յուրահատուկ փուլայնությամբ, որը տևում է ողջ կյանքի ընթացքում: Այդ հաջորդականությունը փիլիսոփա Մ. Մեսսեյը սահմանում է հետևյալ կերպ.

- Դրոշմի փուլ
- Կրկնօրինակման փուլ
- Սոցիալականացման փուլ:

1. ***Դրոշմի փուլ***– Այս փուլը ընդգրկում է երեխայի՝ մինչև 7 տարեկան դառնալը: Ըստ Մ. Մեսսեյի՝ երեխաներն այս փուլում նման են «սպունգի», կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն, հատկապես, եթե դա փոխանցում են ծնողները կամ ուսուցիչները:
2. ***Կրկնօրինակման*** փուլն ընդգրկում է երեխաների 8-13 տարեկան հասակը: Այս փուլում երեխաները կրկնօրինակում են իրենց ծնողներին, ուսուցիչներին, համադասարանցիներին, շրջապատող մարդկանց:
3. ***Սոցիալականացման*** փուլը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկանը: Այս փուլում երեխաների համար շատ կարևոր է իրենց հասակակիցների կարծիքը և կրում են նրանց ուղիղ ազդեցությունը իրենց վրա: Արժեքների ձևավորման այս փուլում, շատ մեծ ազդեցություն ունեն հատկապես հուզական իրադարձությունները:

Փորձենք հստակ դասանյութերի օրինակով ներկայացնել ուսումնական նյութի արժեքաբանական նշանակությունը յուրաքանչյուր առարկայի շրջանակում:

Արժեքաբանական տեսանկյունից հատկապես մեծ է ***մայրենիի*** դասագրքի դերն ու նշանակությունը:

«Հայաստանը մեր հայրենիքն է» խորագիրը կրող ուսումնական թեման իր մեջ ներառում է մի շարք դասանյութեր, որոնք ծանոթացնում են հայրենի բնաշխարհին, սերմանում երեխաների մեջ սեր առ հայրենիք և հայրենի բնօրրան, ծանոթացնում են ազգային արժեքներին և մշակութային հարստությանը:

Ներառված դասանյութերը՝

- Մասիս: Նոյի տապանն Արարատի վրա
- Փակ աչքերով
- Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ
- Երևան
- Սուրբ էջմիածին

- Լավաշը[3]

և այլն, ծանոթացնում են աշակերտներին մեզ համար ազգային արժեք հանդիսացող երևույթների, կոթողների և վայրերի մասին:

Նախնական պատկերացում տալիս մեր հայրենիքի անցած ուղու, դժվարությունների և ձեռքբերումների մասին: Ցույց են տալիս մեր նյութական և ոչ նյութական հարստությունն ու սովորեցնում արժևորել ու գնահատել այն: Քննարկումների և ուղղորդող հարցերի միջոցով հնարավորություն է տրվում երեխաներին խորհելու այս թեմաների շուրջ, իրենց համար հստակեցնելու՝ ինչն է լավ կամ վատ, կարևորելու հայրենիքի, մայրենի լեզվի դերն իրենց կյանքում, հայրենասիրությունը դարձնելու իրենց ապրելակերպի մի մասը, գիտակցելով հայրենիքի դերն իրենց կյանքում և կարևորությունը ազգապահպանության և ազգային դիմագիծը հստակ պահելու տեսանկյունից:

Երրորդ դասարանում այս ամենն առավել խորն է ուսումնասիրվում, ավելանում են նոր թեմաներ, բացահայտելով ոչ միայն հայրենի բնաշխարհի հարստությունն, այլև ծանոթացնում են այն հայորդիներին, ովքեր մեծ ներդրում են ունեցել մեր հայրենիքի կայացման, պահպանման տեսանկյունից: Այդ թեմաների շարքին են դասվում «Հայրենի՜ք, ես մի զարկն եմ քո բազկի» թեմայի ստեղծագործությունները[4].

- Հովհաննես Շիրազ– Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց,
- Վաս– Երկնքի բոլոր աստղերը ճանաչում էին նրան
- Ղուկաս Սիրունյան– Մեր Անդրանիկը

և այլն:

Չորրորդ դասարանի դասագիրքն ամրապնդում է երեխաների մեջ ձևավորված արժեքները, մայրենի լեզվի, հայրենիքի, Հայաստանի մասին:

Ամրապնդում ազգային արժեքների հանդեպ սերը երեխաների ներսում:

- Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները,
- Ա՛յ քեզ բան. ինչ կա–չկա, ինչ երևում–չի երևում ՝ հա՜յ–ռե՜–նի՜ք է

թեմաները երեխաների մեջ ամրապնդում են հայրենիքի մասին պատկերացումները, շաղկապում դրանք հայրենիքի սիրո հետ և ձևավորում հայրենասեր և ազգասեր քաղաքացիներ:

- Ես այսպե՜ս ասեմ, դու այնպե՜ս հասկացիր,
- Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ,

---

3 Սարգսյան Վ. և ուրիշներ, «Մայրենի 2»- դասագիրք հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի համար: Երևան, Մանմար հրատարակչություն, 2010թ.

4 Սարգսյան Վ. և ուրիշներ, «Մայրենի 3» դասագիրք հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի համար: Երևան, Մանմար հրատարակչություն, 2011թ.

- Այս զարմանահրաշ մոլորակը

թեմաների շրջանակներում ներառված ուսումնական նյութերը կարևորում են հաղորդակցումն անձնային շփման, միմյանց հասկանալու, արժեհամակարգի փոխանցման և հարստացման տեսնակյունից, սովորեցնում դիտարկել ընտանիքը, ընկերությունը, հավատարմությունը, ազնվությունը, որպես կարևոր և անգնահատելի արժեքներ:

Աշակերտների մեջ արժեքային համակարգ ձևավորվում է նաև մաթեմատիկայի, ես և շրջակա աշխարհը, շախմատ, տեխնոլոգիա, երաժշտություն, կերպարվեստ և մյուս առարկաների դասաժամերին:

Մաթեմատիկա, շախմատ առարկաները երեխաների մոտ ձևավորում են խնդիրները լուծելու կարողություն, ճկունություն, մտածողություն, վերլուծելու ունակություն և այլ արժեքներ, զարգացնում են տրամաբանությունն ու արագ կողմնորոշվելու կարողությունը:

Երաժշտություն առարկայի շրջանակներում երեխաների մեջ սերմանվում է սեր դեպի ազգային և համաշխարհային երաժշտությունը՝ զարգացնելով նրանց մեջ ճաշակ, մտածելակերպ, վերաբերմունք և այլ հատկանիշներ երգի ժամերին

Կերպարվեստի միջոցով աշակերտը ծանոթանում է համամարդկային և ազգային արժեք համարվող արվեստի նմուշներին, գնահատում և արժևորում գեղեցիկն ու ներդաշնակը:

Շատ կարևոր է ***տեխնոլոգիա*** առարկայի դերը, այն ձևավորում է մշակութային ճաշակ, ճանաչողական կարողունակության, ստեղծագործական միտք, գեղագիտական ճաշակ, համագործակցելու կարողականություն, երևակայական միտք, սեփական մտքերն արտահայտելու կարողունակություն, աշխատասիրություն, գեղագիտական, ժողովրդավարական, սոցիալական, հասարակական, ընտանեկան արժեքներ:

Ես և շրջակա աշխարհը դասընթացի շրջանակներում երեխան ծանոթանում է հայրենի բնաշխարհին, իրեն շրջապատող բնությանը, գնահատում և արժևորում հայրենիքի ամեն քարն ու թուփը, էկոլոգիական դաստիարակության միջոցով կարևորում բնության դերն ու նշանակությունը առողջության պահպանման, անձի կենսագործունեության և գեղեցիկի ընկալման տեսանկյունից:

Շատ կարևոր է նշել նաև ***ֆիզկուլտուրա*** առարկայի կարևորության մասին, սովորողներին առողջ ապրելակերպի կարոնները ուսուցանելու, առողջության ամրապնդման և պահպանման, միտք, մարմին, հոգի եռամիասնության պահպանման և արժևորման տեսանկյունից:

Այսպիսով, անհերքելի և անգնահատելի են ուսումնական նյութերի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորման տեսանկյունից, սակայն կարևոր է ճիշտ ուղղորդումը, ինչը առանց ուսուցչի պարզապես անհնարին կլիներ:

Գլուխ 3. Հետազոտական աշխատանքների արդյունքների վերլուծություն

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԱՐԱՆ

«Տարրական դպրոցի 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում» թեմայի ուսումնասիրության շրջանակներում հարցեր ենք առանձնացրել նաև գործող մանկավարժների համար, որոնք նպատակ ունեն բացահայտելու ոլորտի մասնագետների կարծիքը նշված թեմայի վերաբերյալ: Այս նպատակով մեր կողմից մշակված հարցերը հիմնականում միտված են եղել բացահայտելու դասագրքերում ներառված նյութերի արժեկողմնորոշիչ բնույթը, փորձելու պարզել, թե որքանո՞վ են դասագրքերում առկա թեմաները նպաստում արժեհամակարգի ձևավորմանը, գտնել արժեքի սահմանումը և նշել, թե ի՞նչ արժեքներ են դրանք հիմնականում ձևավորում:

Հարց 1.

Ի՞նչ թեմաներ կան դասագրքերում, ինչպիսի՞ արժեքներ են ձևավորում դրանք /բերեք օրինակներ/:

Հարցվածների 80%-ը հիմնականում առանձնացրել է հետևյալ թեմաները՝ <<Հայաստանը մեր հայրենիքն է>>, <<Մեր տունը>>, <<Լավ ու բարի գործեր>>, <<Իմ անուշիկ Հայաստան>> թեմաները: Նշված թեմաները հատկապես կարևորվում են հատկապես նրանով, որ դեռ փոքր հասակից սեր են սերմանում հայրենիքի նկատմամբ, ձևավորում հարգանք հայրենի հողի և ջրի, շրջապատող միջավայրի նկատմամբ: 20%-ը վերը նշված թեմաներից զատ առանձնացնում է նաև <<Ժողովուրդն իմաստուն է>>, <<Երկնքից երեք խնձոր ընկավ>>, <<Ոսկե աշուն>> թեմաները, որոնք ձևավորում են գեղագիտական ճաշակ՝ գեղեցիկը տեսնելու և ընկալելու կարողություն, ինչպես նաև ազգային առած-ասացվածքների, պատմվածքների և առակների շնորհիվ փոխանցում են մեր ազգային դիմագիծը կազմող արժեքներ:

Հարց 2.

Ի՞նչ թեմաներ կավելացնեք դասագրքերում Ձեր նշած արժեքները ձևավորելու համար

Հարցվածների 70 %-ը կարծում է, որ նշված թեմաները հիմնականում բավարարում են երեխաների արժեհամակարգի ձևավորմանը նպաստող չափանիշներին և նոր թեմաներ

ավելացնելու անհրաժեշտություն չկա: 15%-ն առաջարկում է ավելացնել <<Աշխարհն էլ մի հեքիաթ է>>, <<Գրքերի կախարդական աշխարհը>> թեմաները, որոնք ունեն առավել ուսուցողական և դաստիարակչական բնույթ և հեքիաթների շնորհիվ երեխաներին ծանոթացնում են իրական կյանքում տեղի ունեցող իրադարձություններին: 10%-ը կարծում է, որ կարելի է ավելացնել բնության, տիեզերքի, ինչպես նաև ժամանակի և տարածության մեջ կապի առանձնահատկություններին բնորոշ թեմաները՝ շրջակա աշխարհն ու միջավայրը առավել խորն ուսումնասիրելու համար: 5%-ի կարծիքով կարելի է ավելացնել այնպիսի պատմվածքներ, որոնք ունեն սոցիալական բնույթ, առավել արդիական են, և որոնցում կքննարկվեն մարդկային փոխհարաբերությունները՝ հերոսների վարքագիծը, կերպարները, կտրվեն նրանց որակական բնորոշումներ:

Հարց 3.

Ինչպիսի՞ արժեքներ պետք է ձևավորել առաջին և երկրորդ դասարաններում

Հարցվածների 60%-ը առաջին և երկրորդ դասարաններում կարևորում է հատկապես հայրենասիրության, ճշտախոսության, ազնվության, կարգապահության և հոգատարության սերմանումը՝ որպես այն հիմնարար կարևոր արժեքներ, որոնք հետագայում հիմք են հանդիսանում անձի բարոյական նկարագրի ձևավորման համար: 20%-ը կարևորում է մտքի ազատության, հավասարության, ընտանիքում իր տեղն ու դերը գիտակցելու, ինչպես նաև ինքնակառավարման և նոր միջավայրում հարմարվողականության որակների ձևավորումը, որոնք հետագայում ըստ պատասխանողների՝ իմաստավորելու են երեխաների կյանքը: Վերջին 20%-ի կարծիքով այս տարիքում պետք է ձևավորել հարգանք միմյանց, բնության և շրջապատող աշխարհի նկատմամբ, գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողություն:

Հարց 4.

Որքանո՞վ են դասագրքերում եղած թեմաները նպաստում արժեհամակարգի ձևավորմանը

Հարցվածների 80%-ը գտնում է, որ դասագրքերում զետեղված նյութերը հիմնականում բավարարում են երեխաների արժեհամակարգի ձևավորմանը: 15%-ի կարծիքով այս հարցում մեծ է ոչ թե դասանյութերի, այլ՝ ուսուցչի դերը: Եվ 5%-ի կարծիքով դասագրքերում կարելի է ավելացնել առավել զգացմունքային ստեղծագործությունները, որոնք երեխային թույլ կտան արտահայտել իր կարծիքը, քննարկումների միջոցով ձևավորելով նոր արժեքներ և որ որոշ նյութերի ներառումը դասագրքերում պարզապես ինքնանպատակ է և չունի որևէ ուսուցական կամ դաստիարակչական բնույթ:

Հարց 5.

Ի՞նչ է արժեքը, ի՞նչ արժեքներ պետք է ձևավորեն դասագրքերում զետեղված նյութերը

Հարցվածների 40%-ը կարծում է, որ արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքների այլև սեփական կենսափորձի վրա: Դասագրքերում ներառված նյութերը պետք է ձևավորեն հարգանք, սեր հոգևոր արժեքներ, ազատություն և հայրենասիրություն: 30%-ի կարծիքով արժեքը եղածների մեջ կարևորի գիտակցումն է, որը պետք է ունենա յուրաքանչյուր աշակերտ: Երեխայի մոտ նախևառաջ պետք է ձևավորել ազնվությունն ու ճշտախոսությունը որպես արժեք, ինչպես նաև՝ կրթության կարևորության գաղափարը: 30%-ը արժեքը սահմանում է որպես որակական հատկանիշ, որն արտահայտում է մարդու վերաբերմունքը այս կամ այն երևույթի նկատմամբ:

Առավել ուշադրություն դարձնելով ուսուցման գործընթացի մեթոդական մասին, ինչպես նաև միջառարկայական կապերի դերին՝ միջառարկայական կապերի ձևավորման գործում հարցարանի երկրորդ մասում անդրադարձել ենք հետևյալ հարցերին.

Հարց 6.

Նշե՞ք առնվազն երեք թեմա, որոնք զետեղված են դասագրքում, ընթերցանության նյութերում և նպաստում են արժեքների ձևավորմանը:

50%-ն առանձնացրել է <<Մեր տունը>>, <<Լավ ու բարի գործեր>>, <<Դու մեր սիրելի դպրոց>>, <<Իմ անուշիկ Հայաստան>> թեմաները: Մյուս 50%-ի մոտ ներառված են <<Սասունցի Դավթի կռիվը Մսրա Մելիքի դեմ>>, <<Նոյի տապանն Արարատի վրա>>, <<Լավաշը>> դասանյութերը՝ հայրենասիրության և ազգասիրության ձևավորման համար:

Հարց 7.

Ո՞ր առարկաների հետ կարող եք <<Մայրենին>> միջառարկայական կապերի մեջ դնել՝ այս արժեքները ձևավորելու համար

Հարցվածների 70%-ը նշել է, որ <<Մայրենին>> միջառարկայական կապերի մեջ կարելի է և պետք է դնել գրեթե բոլոր առարկաների հետ: 20%-ը նշել է <<Մաթեմատիկան>> և <<Ես և շրջակա աշխարհը>> առարկաները, 10%-ը՝ <<Կերպարվեստ>>, <<Տեխնոլոգիա>>, <<Երաժշտություն>>, քանի որ սրանք մղում են երեխային հասնելու երազանքներին, օգնում են տեսնելու և գնահատելու գեղեցիկը:

Հարց 8.

Ինչպիսի՞ մեթոդներ եք օգտագործում հերոսների արժեքային հատկանիշները բացահայտելու համար

Այս նպատակով ուսուցիչների 60%-ը կիրառում է <<Անկետավորման>>, <<Դաստիարակչական զրույցի>> և <<Մտագրոհի>> մեթոդները, 40%-ը՝ որպես հերոսների արժեքային հատկանիշները բացահայտելու արդյունավետ մեթոդ նշում է քննարկումը, բանավեճը և ֆիլմերի դիտումը:

Հարց 9.

Ի՞նչ մեթոդներ եք օգտագործում արժեքային համակարգը ձևավորելու համար

Ուսուցիչների 70%-ը երեխաների արժեհամակարգը ձևավորելու համար օգտագործում է <<Վենի դիագրամ>>, <<Պրիզմա>>, <<Խորանարդում>>, <<Т-աձև աղյուսակ>>, <<Քարտեզագրում>> մեթոդները, 20%-ը՝ որպես մեթոդ են նշում դերային խաղերը և սեփական օրինակը: Մեզ հատկապես զարմացրեց ուսուցիչների այն 10%-ը, ովքեր դժվարացել են պատասխանել այս հարցին, քանի որ կարծում ենք, որ որպես ուսուցիչ կարևոր է իմանալ և կիրառել բոլոր այն հնարներն ու մեթոդները, որոնք կնպաստեն երեխայի արժեհամակարգի ձևավորմանը:

Հարց 10.

Ձեր դասարանում քանի՞ երեխա է կարողանում ընթերցել բանաստեղծությունն ու հասկանալ իմաստը

Ուսուցիչների 80%-ը նշում է, որ դասարանի երեխաների 60-70%-ը կարողանում է ինքնուրույն ընթերցել բանաստեղծությունն ու հասկանալ իմաստը: 20%-ը նշում է, որ ցուցանիշները բավական ցածր են՝ նյութն ընթերցել և հասկանալ կարողանում է աշակերտների 20-30%-ը: Որպես սրա բացատրություն ուսուցիչները նշում են երեխաների մտավոր ունակությունների մակարդակը և հատուկ կարիքներ ունենալը (ԿԱՊԿՈՒ երեխաներ):

Ամփոփելով ուսուցիչների շրջանում մեր իրականացրած հարցումների արդյունքները կարող ենք նշել, որ ընդհանուր առմամբ ցուցանիշները գոհացնող են. ուսուցիչները դրական են գնահատում դասագրքերի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում:

ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԱՐԱՆ

Որպես ուսուցիչ, մեզ համար կարևոր էր հասկանալ, թե հատկապես ո՞ր թեմաներն են ծնողների կարծիքով առավել դուր գալիս այս տարիքային խմբի երեխաներին և ինչո՞վ է դա պայմանավորված:

1. **Ձեր կարծիքով ո՞ր թեմաներն են դուր գալիս երեխային**

Հարցվածների **40 %-ը** կարծում է, որ այս տարիքի երեխաներին հատկապես դուր են գալիս ընտանիքին, ընկերությանը և հայրենասիրությանը նվիրված թեմաները, որոնք

երեխայի մոտ ձևավորում են բարոյական արժեհամակարգ, սովորեցնում կարևորել ազնվությունը, նվիրվածությունը, սերը հայրենիքի և հարազատների նկատմամբ:
25 %-ը կարևորում է բնությանը և կենդանիներին նվիրված թեմաները՝ շեշտելով դրանց նշանակալի լինելը երեխայի էկոլոգիական դաստիարակության տեսանկյունից:
15%-ի կարծիքով երեխաներին դուր են գալիս բոլոր այն թեմաները, որոնք բնորոշ են նրանց տարիքային առանձնահատկություններին, ընկալելի են նրանց համար և գտնվում են նրանց հետաքրքրությունների շրջանակներում: Մեր կարծիքով այս պատասխանը միանշանակ ընկալել չի կարելի, քանի որ յուրաքանչյուր դասագրքում զետեղված նյութերը այսպես թե այնպես ապահովում են երեխաների տարիքային և անհատական առանձնահատկություններին բնորոշ չափանիշային շեմը, գրված են նրանց համար ընկալելի լեզվով և բավարարում են նրանց հետաքրքրությունների շրջանակը: **8%-ը** նշում է, որ երեխաներին դուր են գալիս բոլոր այն թեմաները, որոնք ունենում են երջանիկ ավարտ, ուսուցողական են և չեն պարունակում մահվան թեմատիկային վերաբերվող նյութեր: Հարցվածների **2%-ը** դժվարացել է պատասխանել սույն հարցին:
Հաջորդիվ փորձել ենք պարզել, թե երեխաներն ինչքանո՞վ են հետաքրքրվում ընտանեկան բյուջեով, և ինչպիսի՞ն է ծնողների տեսակետը այս հարցի վերաբերյալ:

2. **Երեխան որքանո՞վ պետք է տեղյակ լինի ընտանեկան բյուջեի մասին**

Հարցվածների **80%-ը** գտնում է, որ այս տարիքում երեխան չպետք է տեղյակ լինի ընտանեկան բյուջեից, նրան պետք է հետաքրքրեն միայն իր դասերը, իսկ բյուջեի մասին պատկերացում ունենալը խանգարում է նրա անհոգ մանկությանը: Երեխային պետք է զերծ պահել ընտանեկան բյուջեի մասին ցանկացած խոսակցությունից: **15%-ի** կարծիքով երեխան պետք է ընտանեկան բյուջեի մասին պատկերացում ունենա այնքանով, որքանով իրեն է հետաքրքրում, սակայն պետք է հստակ իմանա, որ յուրաքանչյուր իր ունի իր գինը և ոչ միշտ է որ ծնողը կարող է բավարարել իր պահանջները: **5 %-ի** կարծիքով երեխան պետք է տեղեկացված լինի ընտանեկան բյուջեից, ինչպես նաև ունենա իր առանձին բյուջեի որոշակի հատված, որն ինքը կտնօրինի:

3. **Ձեր ընտանիքում փողն արժե՞ք է, թե՞ միջոց**

Հարցվածների 98%-ի կարծիքով փողը սոսկ ապրելու միջոց է՝ ընտանիքի կարիքները հոգալու համար: Առավել հետաքրքրական էին հարցվածների 2%-ի կարծիքն այն մասին, որ փողը և՛ արժեք է, և՛ միջոց, և եթե չգնահատվի որպես արժեք ճիշտ չի ծախսվի որպես միջոց, իրենց խոսքով՝ փողը միջոց է արժեքներ ստեղծելու համար:
Հաջորդիվ փորձել ենք պարզել ընտանիքի՝ երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում ունեցած դերն ու նշանակությունը, այն արժեքները, որոնք երեխան կարող է

սովորել ընտանիքի անդամներից և երեխայի անձնական տարածքը հարգելու՝ ծնողների պատրաստակամությունը:

4. Ընտանիքը ի՞նչ ազդեցություն է ունենում երեխայի արժեհամակարգի վրա

Մեզ առավել դուր եկավ այն հանգամանքը, որ հարցվածների 100%-ը կարևորել է ընտանիքի դերն ու նշանակությունը երեխայի արժեհամակարգի ձևավորման գործում, նշելով, որ ընտանիքում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը, դրական հարաբերությունները, փոխադարձ սերն ու հարգանքը ընտանիքի անդամների միջև, երեխաների մոտ ձևավորում են դրական, կայուն բարոյահոգեբանական արժեհամակարգ՝ դաստիարակելով երեխային որպես օրինակելի անձ և քաղաքացի:

5. Ձեր երեխան ի՞նչ կարող է սովորել Ձեզնից

Հարցմանը մասնակցած ծնողները հատկապես կարևորում են իրենց դերը՝ երեխայի վարքի և արժեհամակարգի ձևավորման վրա, նշելով, որ այս տարիքում հատկապես, երեխան սպունգի նման ներծծում է ամեն բան, և իր համար առաջին և կարևոր օրինակի աղբյուրը հենց ծնողներն են ուստի շատ կարևոր է ծնողի վարքն ու սովորույթները երեխայի ճիշտ դաստիարակության գործում: Ըստ մեզ սա հատկապես կարևորվում է նրանով, որ ընտանիքն այն սոցիալական ինստիտուտն է, որտեղ սկսվում է երեխայի անձի զարգացման և ձևավորման գործընթացը և հիմք է ստեղծվում նրա բնականոն սոցիալականացման գործընթացի համար:

Երեխան տանը որևէ անկյուն ունի՞, որին բացի իրենից ոչ ոք ձեռք չի տալիս

Այս հարցի շրջանակներում մեզ ուրախացրեց այն հանգամանքը, որ հարցվածների 80%-ը նշում էր, որ երեխան տանն ունի իր համար առանձին հատկացված անկյուն, որտեղ միայն իր իրերն են և ոչ ոք բացի երեխայից դրանց ձեռք չի տալիս՝ հարգելով երեխայի անձնական տարածք ունենալու իրավունքը: 5%-ը նշում է, որ երեխան ունի տանն առանձին տարածք, սակայն ծնողները պարբերաբար ստուգում են այն, կամ երեխան չի դրել սահմանափակում ծնողների առաջ՝ իր իրերին ձեռք չտալու: 15%-ը նշում է, որ երեխան տանը չունի անձնական անկյուն, դա իրենց տանն ընդունված չէ և երբևէ չի քննարկվել:

6. Ի՞նչ թեմաներ կավելացնեք, և որո՞նք կհանեք դասագրքերից

Հարցվածների 90%-ը նշում է, որ դասագրքից որևէ թեմա չի հանի, սակայն կավելացնի առակները, ինչպես նաև բոլոր այն թեմաները, որոնք երեխաների մոտ ձևավորում են ընկերասիրություն, կարեկցանք, մարդասիրություն, հանդուրժողականություն: 5%-ը նշում է, որ դասագրքերում որևէ փոփոխություն չէր անի, և որ դասագրքերում առկա նյութերը մատչելի և ուսուցողական են երեխաների համար: 5%-ը նշում է, որ կավելացներ հայ դասականների ստեղծագործություններ, իսկ տարրական դպրոցի դասարաններից կհաներ <<Ես և շրջակա աշխարհը>> դասագիրքը, քանի որ իրենց

կարծիքով այն անիմաստ ծանրաբեռնում է երեխաներին և որ տարիներ անց՝ <<Կենսաբանություն>> առարկայի շրջանակներում այդ թեմաները միևնույնն է ուսումնասիրվում են: Համամիտ չլինելով այս մտքի հետ, պետք է նշենք, որ <<Ես և շրջակա աշխարհը>> տարրական դասարաններում ունի կարևոր և ուսուցական նշանակություն՝ երեխայի էկոլոգիական դաստիարակության, կյանքի տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու, կենցաղային անվտանգության պահպանման նկատառումներով, որն այս տարիքում հատկապես վճռորոշ է երեխայի հետագա դաստիարակության համար: Ի հավելումն այս ամենի պետք է նշել, որ

7. **Ձեր կարծիքով դասագիրքն ի՞նչ դեր է խաղում երեխայի դաստիարակության գործում**

Հարցվածների 95%-ի կարծիքով դասագրքերն ունեն մեծ դաստիարակչական նշանակություն երեխաների կրթության և դաստիարակության գործում, քանի որ նրանց մեջ ձևավորում են հայրենասիրություն, մարդասիրություն, օգնում են լինել ազնիվ, աշխատասեր, սովորեցնում՝ սիրել իրենց շրջապատող աշխարհն ու պահպանել այն: 5%-ը նշում է, որ դասագրքերը այդքան էլ մեծ նշանակություն չունեն երեխայի դաստիարակության գործում, այլ այս դեպքում կարևորվում է ուսուցչի ազդեցությունը ով ինքն է նպաստում երեխաների մոտ դրական արժեհամակարգի ձևավորմանը:

Ամփոփելով մեր հարցաթերթը փորձել ենք պարզել, թե ընտանիքում երեխայի մոտ ո՞ր արժեքներն են ձևավորվում

8. **Ի՞նչ արժեքներ երեխան կձևավորի ձեր ընտանիքում**

Կարևորելով ընտանիքի յուրաքանչյուր անդամի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորում գործում հարցված ծնողների 100%-ը նշել է բոլոր այն դրական հատկանիշները, որոնք երեխան տեսնում է իր ընտանիքում և ընդօրինակում նրանցից: Այդ արժեքների շարքին են դասվում հարգանքը թե՛ մեծերի, թե՛ փոքրերի հանդեպ, փոխադարձ սերն ու հանդուրժողականությունը, նվիրվածությունը, սերն արվեստի և մշակույթի հանդեպ, որոնք կօգնեն երեխային ձգտելու իր տեղը գտնել ներկայիս հասարակությունում:

Ամփոփելով պետք է նշենք, որ ընդհանուր առմամբ արդյունքները գոհացնող էին, քանի որ ծնողները հիմնականում մեծ տեղ են հատկացնում թե՛ դպրոցին, թե՛ ուսուցչին և թե՛ դասագրքերի դերին երեխայի արժեհամակարգի ձևավորման, դրական հատկանիշների վրա հիմնված կրթության և դաստիարակության գործընթացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով «Տարրական դասարանների 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում» թեման, հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝

1. Դասագրքաստեղծման գործընթացում ժամանակ առ ժամանակ տեղի են ունեցել և դեռ պետք է տեղի ունենան որոշակի բարեփոխումներ, որոնք կնպաստեն կրթության որակի բարելավմանն ու առաջանցիկ զարգացմանը, քանի որ ներկայումս հասարակական և տնտեսական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները ուղղակիորեն անդրադառնում են կրթության համակարգի վրա:
2. Դասագրքաստեղծման գործընթացի փուլայնությունը անընդմեջ վերահսկողություն է պահանջում չափորոշչով սահմանված կարգով, որակյալ դասագրքերի ստեղծման տեսանկյունից:
3. Դպրոցի նպատակը գիտելիք փոխանցելուց զատ և առավել՝ մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ազնիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է: Դաստիարակել խելացի, սակայն բարոյական արժեքներին անհաղորդ սերունդ նշանակում է կործանել մի ողջ սերնդի և ազգի ճակատագիր:
4. Անհերքելի և անգնահատելի են ուսումնական նյութերի դերը երեխայի արժեհամակարգի ձևավորման տեսանկյունից, սակայն կարևոր է ճիշտ ուղղորդումը, ինչը առանց ուսուցչի պարզապես անհնարին կլիներ:
5. Մեր հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ թե՞ ծնողները, և թե՞ ուսուցիչները հիմնականում մեծ տեղ են հատկացնում դասագրքերի դերին երեխայի արժեհամակարգի ձևավորման, դրական հատկանիշների վրա հիմնված կրթության և դաստիարակության իրականացման գործընթացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սարգսյան Վ. և ուրիշներ, «Մայրենի 2»- դասագիրք հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի համար: Երևան, Մանմար հրատարակչություն, 2010թ.
2. Սարգսյան Վ. և ուրիշներ, «Մայրենի 3» դասագիրք հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի համար: Երևան, Մանմար հրատարակչություն, 2011թ.
3. «Կրթության մասին» ՀՀ օրենք, 14. 04. 1999թ.
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 10.07.2009թ.
5. ՀՀ պետական չափորոշիչ, Երևան, 09. 02. 2021թ.
6. ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման N2 Հավելված
7. ՀՀ Կառավարության՝ 2021 թ. -ի փետրվարի 4-ի N 136-N որոշում
8. «Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծ, 15.12.2021թ.
9. ՀՀ ԿԳ նախարարի (ներկայումս ԿԳՄՍ) N 752-Ն հրամանը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգը հաստատելու մասին, Երևան, 21. 09. 2009թ.
10. ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգը հաստատելու մասին, 23. 10. 2009թ.
11. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը հանրակրթական առարկաների դասագրքերի և ուսումնաօժանդակ գրականության ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դրանց համապատասխանության գնահատման առարկայական

հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանելու մասին, Երևան, 09. 06. 2022թ.
12. https://www.cfep.am/hy/archived/, Կրթական ծրագրերի կենտրոն
13. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Հավելված 1.

ՀԱՐՑԱՐԱՆ

Հարգելի՝ ուսուցիչ, «Տարրական դասարանի 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում» վերնագրով մեր մագիստրոսական թեզի շուրջ հետազոտության շրջանակներում մեզ հետաքրքրում է Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել ստորև նշված հարցերին:

1. Ի՞նչ թեմաներ կան դասագրքերում, ինչպիսի՞ արժեքներ են ձևավորում դրանք /բերեք օրինակներ/:

_____

_____

2. Ի՞նչ թեմաներ կավելացնեք դասագրքում ձեր նշած արժեքները ձևավորելու համար:

_____

_____

3. Ի՞նչպիսի արժեքներ են պետք ձևավորել առաջին և երկրորդ դասարաններում:

_____

_____

4. Որքանով են դասագրքում եղած թեմաները նպաստում արժեհամակրգի ձևավորմանը:

_____

_____

5. Ինչ է արժեքը, ինչ արժեքներ պետք է ձևավորեն դասագրքերում զետեղված նյութերը:

_____

_____

6. Նշե՛ք առնվազն երեք թեմա որոնք զետեղված են դասագրքում, ընթերցանության նյութերում և նպաստում են այդ արժեքների ձևավորմանը:

_____

_____

7. Ո՞ր առարկաների հետ կարող եք հայրենին միջառարկայական կապերի մեջ դնել՝ այս արժեքները ձևավորելու համար:

_____

_____

8. Հայրենասիրություն ձևավորելու նպատակով միջառարկայական ի՞նչ կապեր կարող եք ստեղծել տվյալ:

_____

_____

9. Ինչպիսի՞ մեթոդներ եք օգտագործում հերոսների արժեքային հատկանիշները բացահայտելու համար:

_____

_____

10. Ի՞նչ մեթոդներ եք օգտագործում արժեքային համակարգը ձևավորելու համար:

_____

_____

11. Ձեր դասարանում քանի՞ երեխա է կարողանում ընթերցել բանաստեղծությունն ու հասկանալ իմաստը:

_____

_____

Հավելված 2.

ՀԱՐՑԱՐԱՆ

Հարգելի՛ ծնող, «Տարրական դասարանի 2-րդ դասարանի դասագրքերի դերը կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորման գործում» վերնագրով մեր մագիստրոսական թեզի շուրջ հետազոտության շրջանակներում մեզ հետաքրքրում է Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել ստորև նշված հարցերին:

1. Ձեր կարծիքով ո՞ր թեմաներն են դուր գալիս երեխային:

_____

_____

2. Երեխան որքանո՞վ պետք է տեղյակ լինի ընտանեկան բյուջեի մասին:

_____

_____

3. Ձեր ընտանիքում փողը արժե՞ք է, թե՞ միջոց:

_____

_____

4. Ընտանիքը ի՞նչ ազդեցություն է ունենում երեխայի արժեհամակարգի վրա:

_____

_____

5. Ձեր երեխան, ի՞նչ կարող է սովորել Ձեզնից:

_____

_____

6. Երեխան տանը որևէ անկյուն ունի՞, որին բացի իրենից ոչ ոք ձեռք չի տալիս:

_____

_____

7. Ի՞նչ թեմաներ կավելացնեք, և որո՞նք կհանեք դասագրքերից:

_____

_____

8. Ձեր կարծիքով դասագիրքն ի՞նչ դեր է խաղում երեխայի դաստիարակության գործում:

_____

_____

9. Ի՞նչ արժեքներ երեխան կձևավորի ձեր ընտանիքում:

_____

_____